Դանիել Վարուժան

Սայլերը

Գյուղին ճամփայեն սայլերը կերթան
Հունձքով բեռնաբարձ:
Մայրամուտի մեջ շարժուն բուրգեր են՝
Ճաճանչներ հագած:
Թխադեմ տղաներ, դեզերուն վրա,
Կխթանեն մերթ
Մեղծի եզերուն կողը սրսփուն,
Կողը լուսաշերտ:
Գոմեշներ, համառ, ետև կարկառած
Իրենց մութ լեզուն՝
Կքանդեն որան՝ որ կհեղեղվի
Իրենց նուսերուն:
Ցորեններ ի լյուղ պերճ արյունին մեջ
Իրիկնադեմին՝
Նոր պսակ կըլլան պսակին վրա
Անոնց եղջյուրին:
Ճամփան, արտերեն կալերը մինչև,
Կծփա հասկով՝
Զոր ուշ մնացած հավեր կքրքրեն
Զվարթ կտուցով:
Ճամփան խարտյաշ է, կարմիր է ճամփան,
Որուն եզերքին
Արյուն կծորե չափազանց հասուն

Փոշոտ մորենին:
Սայլերը կերթան, անդորրության մեջ
Աղաղակելո՞վ…
Կտանին արև, հրդեհ կտանին
Հսկա դեզերով:
Կտանին հեղեղն ահա լեռնացած
Քրտինքի, Հույսի,
Որ լուծեն մինչև անիվներուն վրա
Առատ կհոսի:
Կերգե՞ն տղաներ, խթանելով միշտ
Կողը եզերուն…
Ջինջ անհունին մեջ զիրենք կօրորե
Ցունցը դեզերուն:
Կերգեն ճպուռին, մանգաղին նման,
Կերգեն հովի պես,
Մինչ հասնին կալերն, ու հոն տարածեն
Հունձքը ծովի պես: